ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 85/1-Լ «08» 05 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ 2023 Թ. ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԹԻՎ 135/1-Լ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

հրամայում եմ

1. ԵՊՀ ռեկտորի 2023 թ. հուլիսի 19-ի թիվ 135/1-Լ հրամանով հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ռեգիստրար (registrar)» համակարգում դասընթացի բաղադրիչների առավելագույն միավորների ընտրության և գնահատականների մուտքագրման» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Կարգի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«6. Համակարգում մուտքագրված և հաստատված գնահատականը փոփոխման ենթակա չէ, բացառությամբ սույն կարգի 6.1-րդ կետով սահմանված դեպքի»:

2) Կարգը լրացնել 6.1.-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«6.1. «Ռեգիստրար (registrar)» համակարգում գնահատականի հաստատումից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում վրիպակ նկատելու դեպքում դասախոսը գրավոր դիմում է ներկայացնում ռեկտորին կցելով համապատասխան փաստերն ու հիմնավորումները: Դիմումում ներկայացված պարզաբանման և կից ներկայացված փաստերի ու հիմնավորումների արժանահավատության դեպքում ռեկտորը տալիս է «Ռեգիստրար (registrar)» համակարգում գնահատականի փոփոխություն կատարելու թույլտվություն: Սույն կետում նշված ժամկետը բաց թողնելու դեպքում դիմումը ենթակա է մերժման»:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Կ. Հովհաննիսյան